

Արձանագրություն N 3

ք. Ալավերդի

«18» 05. 2018թ

2018թ մայիսի 18- ին տեղի ունեցավ բժշկական օգնության սպասարկման ոլորտում որակի վերահսկման մասնագիտական հանձնաժողովի նիստ /նախագահությամբ փոխտնօրեն Ս.Նազարեթյանի/:

Քննարկվեց որակի հանձնաժողովի կողմից ընկերության ամբուլատոր-պոլիկլինիկական մասի հիվանդների ամբուլատոր բժշկական քարտերում կատարված գրանցումներում, ՄԻՀ-ով տառապող հիվանդների բժշկական քարտերի ու հիվանդների վարման ժամանակ տեղ գտած թերությունները:

Զեկուցումով հանդես եկավ ամբուլատոր պոլիկլինիկական մասի փոխտնօրեն ` որակի պատասխանատու Ս.Նազարեթյանը, նա նշեց, որ ուսումնասիրվել է ամբուլատոր մասի տեղամասային թերապևտների կողմից տարվող պատահական ընտրությամբ 7-8 ամբուլատոր բժշկական քարտ:

Զեկուցողը նշեց, որ չնայած զգալի առաջընթացի, նորից ամբուլատոր քարտերում տեղ են գտել որոշակի թերություններ ու թերացումներ:

Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտերում, բացառությամբ վերջին 2 տարիներին, եզակի դեպքերում լաբորատոր –գործիքային հետազոտությունների ու նեղ մասնագետների կողմից կատարված կունսուլտացիաների պատասխանները ճիշտ տեղում չի կցված, մեկ- երկու դեպքերում էլ կուրսուսները գրված են հակիրճ, կամ չի պահպանվել գրանցման անհրաժեշտ հաճախականությունը: Կան եզակի (1-2 դեպքեր), երբ անհրաժեշտ հետազոտություններից ու անամնեզից հետո հիվանդի ամբուլատոր քարտերում լիարժեք չի գրված անհրաժեշտ բուժումը:

Մեկ դեպքում գրվել է հիպերտոնիկ հիվանդության կուրսուս, սակայն լիարժեք անհրաժեշտ բուժման կուրս չի նշանակվել: Մեկ դեպքում էլ էլեկտրասրտագրումից հետո չի ամրագրվել սրտաբանի եզրակացությունը:

Մեկ ուրիշ դեպքում կուրսուսով հիմնավորվել է դիաբետ հիվանդությունը սակայն համապատասխան հետազոտություններ տվյալ պահին չի իրականացվել, և համապատասխան բուժում ըստ գրանցման կատարվել է մոտ մեկ ամիս հետո:

Մեկ այլ դեպքում նկարագրվել է օստիոխոնդրոզ սակայն անհրաժեշտ լիարժեք բուժում ըստ գրանցման չի իրականացվել:

Ըստ էությանը արտահայտվեցին Օ. Գրիգորյանը, Ա. Ղալայանը, Գ. Աբելյանը
և Ռ. Գալստյանը: Նրանք նշեցին, որ նշված դիտողությունները և թերությունները
տեղին են. Շնորհակալ ենք համապատասխան ցուցումների և առաջարկների
համար, որոշ թերություններ կապում ենք հոգնածության և ծանրաբեռնվածության
հետ: Կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները նշված թերությունների
վերացման և դրանց չկրկնվելու ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից առաջարկվեց առավել հետամուտ և ուշադիր լինել
հատկապես բուժման և հետազոտման ընթացքում թերությունները բացառելու
համար: Հակառակ դեպքում համապատասխան մասնագետը կենթարկվի ոչ թե
բանավոր դիտողության այլ առավել խիստ պատասխանատվության:

Նախագահ՝
Քարտուղար՝

Ս. Նազարեթյան
Ս. Բաբայան